Գործ համար ԵԱՔԴ /1239/02/12

ՎՃԻՌ

Հանուն Հայաստանի Հանրապետության

10.10.2012թ. դատարանի թիվ 6 դահլիճում

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը

նախագահությամբ դատավոր՝ Ս. Արամյանի
քարտուղարությամբ՝ Մ. Սամսոնյանի

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության /ՀՎՀՀ՝ 02568394, ՊԳՎ՝ թիվ 211 171 01863/ ընդդեմ «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասին.

ՊԱՐԶԵՑ

I

1. Դատավարական նախապատմությունը

Հայցադիմումը մուտք է եղել դատարան 2012թ.-ի հուլիսի 2-ին և այն դատարանի 04.07.2012թ.-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը դիմելով դատարան, խնդրել է «Բարգավաճ Հայաստան» Կուսակցությանը պարտավորեցնել հնգօրյա ժամկետում տրամադրելու հայցված տեղեկատվությունը հետևյալի մասին՝ «Բարգավաճ Հայաստան» Կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքան գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար: Ծախսած գումարներից որքանն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքանը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը, ինչպես նաև լուծել պետական տուրքի և դատական ծախսերի հարցը:

Սույն գործը չի նախապատրաստվել դատաքննության՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22^2 գլխի կանոններով:

Պատասխանողի կողմից 10.09.2012թ.-ին դատարանում մուտքագրվել է հայցադիմումի պատասխան:

Գործում չեն ներգրավվել երրորդ անձինք:

2. Հայցվորի դիրքորոշումը

Հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 12.09.2012թ.-ին դատարանում մուտքագրել է դիմում, որով

դատարանին հայտնել է, որ «Բարգավաճ Հայաստան» Կուսակցությունից ստացվել է պատասխան, ինչպես նաև միջնորդություն՝ գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթի կարճմանը իրենք դեմ չեն լինի, եթե դատարանը լուծի պետական տուրքի հարցը և հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձվի վճարված պետական տուրքը կամ եթե «Բարգավաճ Հայաստան» Կուսակցությունը կամավոր ՀԿ-ին փոխանցի վճարված պետական տուրքի գումարը:

3. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանող «Բարգավաճ Հայաստան» Կուսակցությունը 10.09.2012թ.-ին դատարանին է ներկայացրել հաիցադիմումի պատասխան, որով դատարանին հայտնել է, որ «Բարգավաճ Հայաստան» Կուսակցությունը կատարել է հայցվորի պահանջը 04.09.2012թ.-ին:

«Բարգավաճ Հայաստան» Կուսակցության աշխատակազմի ղեկավար Ռ. Մանուկյանը 01.10.2012թ.-ին դատարանում մուտքագրել է դիմում, որով դատարանին հայտնել է, որ «Բարգավաճ Հայաստան» Կուսակցությունը կամավոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հաշվին է փոխանցել նշված կազմակերպության կողմից վճարված պետական տուրքի գումարը՝ 4000 դրամ, որի հիմքով էլ խնդրել է կարճել թիվ ԵԱՔԴ /1239/02/12 քաղաքացիական գործի վարույթը:

II

1. Դատարանի վերլուծությունը և կիրառելի իրավունքը

Ուսումնասիրելով քաղաքացիական գործի նյութերը, ներկայացված դիմումը՝ դատարանը գտավ, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետի հիմքով գործի վարույթը ենթակա է կարճման, համաձայն որի՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

Փաստորեն հայցվորի գրությունում նշված պայմանը պատասխանողի կողմից կատարվել է, որի դեպքում հայցվորը դեմ չէ գործի վարույթը կարճելուն, այսինքն հայցը չի պնդում, քանի որ պահանջը պատասխանողը կատարել է:

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետով, 130-131 հոդվածներով, դատարանը.

ՎՃՌԵՑ

1. Թիվ ԵԱՔԴ /1239/02/12 քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասին, կարճել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Սույն դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նշված ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ